



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրել նյութը ցույկացած ձևավայրով կամ կրկնով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առնդժու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

3530-

Մ. ԵՓՐԻԿ







891.981


Ա. Եփրիկի

Տպիցներ

A3 185578
8975

Ֆեռնանդ

1923.



Անանուն Աղջիկ



Ա.

Չեմ հիշում, յերբ և վորտեղ ենք հանդիպել իրար,
բայց յես քեզ եմ ձանաչում, դու ինձ:

Վոչ անունգ գիտեմ, վոչ ով լինելու:

Բայց գիտեմ ճերմակ ժապավենով պատուծ զորշ
զլիսարկով մի աղջիկ, վորի անվիրջ ու հանգարտ ժպի-
տը կյանք և պարզեռում ինձ, գիտեմ մի աղջիկ, վորի
ժողովը փոսիկներ են ստեղծվում այտերին, դեմքին
արե ու լույս են տալիս աստղ աչերը:

Անանուն աղջիկ, յերբ ինձ հանդիպեցիր՝ արեի
ճառապայմները ջերմացան, սրտիս լարերին զարուն
իր յերգն հորինեց:

Յերբ տեսնում եմ քեզ, հովտաշուշանի բուրմանքը
կտրում և ինձ գետնից:

Զգիտեմ հասկանում ես, հոգիդ զգում ե մեջոյ
յեղած փոթորիկը, ցրտահար տերեկի նման դողում ե
նրա համար, բայց յերբ սիրտս հոգնում ու նիրհ ե
դալիս վրաս, գիտես արդյոք ինչ ե պատահում ինձ—
դու մտնում ես աչքերիս մեջ, խանգարում քունս:

Անծանոթ աղջիկ, դու չգիտես, վոր իմ մենության
ժամերին ինձ հետ ես լինում...

Յես այժմ շատ եմ փափագում մենությունը նրա
համար, վոր գամ քեզ մոտ ու խորհեմ քո մասին, քո
ժպտի մասին, իմ անանուն ծաղկի մասին:

Ամեն պահին արեածագից մինչև մայրամուտ
ուղում եմ կտրվել աշխարհից, վոր տեսնեմ քեզ, վոր
սրտիս յերգով քուն բերեմ աչերիդ, վոր քնած ել տես-
նեմ քո անսպառ ժպիտը:

Այդպես եմ ուղում նրա համար, վոր կարողանամ
քեզ վերածել յերդի, սիրտդ ներդաշնակել սրտիս, վոր
աստվածային լարերի վրա հյուսվի աշխարհն արրեցնող
իմ ե քո յերդը:

Ծիծաղ աղջիկ, թե դու ինձ չես ճանաչում, բայց
գիտես, վոր յես ու դու մնվում ենք մի հոգի պտղով,
ծարավը հագեցնում մի գետի ջրից, կյանք ենք ոտա-
նում մի արեից, ել ի՞նչու յես դու ինձնից փախչում...

Դու գիտես, վոր ամենքը նայում են քեզ, ինչպես
շատերին ու անցնում, բայց ի՞նչու չգիտես, վոր յերբ
յես եմ քեզ հանդիպում, մնում եմ կանգնած ու չեմ
հեռանում, մինչև վոր մի չարաճճի ծիծաղ նետես ու
փախչես ինձնից:

Անծանոթ յեղիր, հոգ չե, միայն թե գիտենամ,
վոր շուրթերդ ուղում են ինձ հաղորդել ձմրանը Մայիս
բերող խոսքը, վոր այսորվա սառնամանիքի մեջ գա-
րունը յեռա կրծքիս տակ...

oooooooo

Այսոր յերբ նորից ծերացավ մեր քաղաքն ու
ճերմակեց ամեն բան՝ սաստկացավ ցուրտը:

Յես ել թեժացը վառարանիս կրակն ու սենյա-
կիս տաքությունից թմրած՝ մտածեցի՛, մտածեցի՛ քո
մասին:

Յերբ տեսնել ուղեցի քո տունը, սրբեցի ապակի-
ների գոլորշին ու տեսա քեզ գլխարաց. դու ընկերու-
հուդ հետ թևանցուկ ճեմում եյիր քո պատշգամբի աակ,
գետը ծածկող սառույցի վրա:

Մեկ ել ճեր զրույցը փոխվեց չարաճճի գնդա-
խաղի:

Այնպես չեյի ուղում, վոր քո մատները դիպչեն
ձյանը, չե վոր կըթրջվեն, կըմրսեն...

Չե վոր ճմեռ ե...

Թվում ե դու այդ չես զգում ու անհոգորեն վերցը-
նում ես ձյունն ու զարկում ընկերուհուդ:

Հապա քո ծիծաղը...

Քո ծիծաղը ցնցում ե եյությունս, թունդ հանում
սիրտս:

Իսկ յերբ դու անվախ վազվզում ես սառույցի
վրա, յես վախենում եմ. վախենում եմ, վոր հանկարծ
սառույցը ճաքի...

Հավատա, ձյուն աղջիկ, յերբ դու ձնագունդ ես
շինում, իմ ճեռքերն են մրսում:

Շուտ, շուտ գնա քո դլյակը, վոր տաք սենյա-
կումս ցուրտ չղղամ:


գ.

Ինձ ինչ, վոր աշխարհն և ճերմակել, միայն թե
հավիտյան թռղ սև մնան քո փունջ վարսերը:

Դու ել գիտես՝ յես ել, վոր այսորվա սպառյցը
կը հաւի, գետն ելի իր ճամբով կերթա, պղտոր ջու-
բը զուլաւ կը գառնա, բայց գիտե՞ս, յեթե դու սառչես,
միբադ պազի, ել չի ջերմանա՝ թեկուղ աշխարհով մեկ-
ժամ վառվի քո առջե...

Յու գիտես, վոր իմ սենյակը քո տան պիմացն է. մեղ բաժանում ե մեր քաղաքի միջով հոսող վարար գետը:

Գիտես և այն, վոր մի քիչ վերև կամուրջ կայթե ուղենաս գալ ինձ մոտ, աստված վկա, գետը չեխանգարի...»



b.

Յերբ լուր առա, վոր դու մեկնելու յես քո հայ-
լենիքը՝ տիսրեցի:

Իսկ այսոր իմացա, վոր ել չես գնալու, վորով-
հետեւ քո հայրենիքի մարդիկ գաղաղել ու արճիճ են
մեխում իրար կուրծք:

Քո հայրենիքում արյուն ու ավեր կա հիմա,
Ուրախությունից որհնում եմ քո հայրենիքի
մարդկանց, վորոնց հրացանների ճարճատյունը չըթո-
ղեց, վոր դու հեռանաս մեր քաղաքից:

○○○○○○○

Զ.

Յես ու դու մի շենքում եյինք, ուր կար նվազ,
յերդ, պար, ծաղիկ, վայելքի համար կար ամեն ինչ,
բայց չկար իմ և քո սըտի հաղորդակցությունը:

Յես կամեցա իմ ծաղկանոցից բերած ծաղկով

դարդարել քո կուրծքը...»

Այդպես ել յեղավ:

Դու չիմացար, իհարկե, վոր կուրծքդ դարդարող
ծաղիկներն իմն եյին:

Դու չգիտեյիր, վոր ժամանակ իշխող աչերիդ փայլը
ծակում եր սիրտս:

Չարմանում եմ, թե ինչու չեյիր տեսնում ինձ,
վոր միշտ շուրջդ եյի պտույտ գալիս:

Միթե չեյիր զգում, վոր յերբ դու ծիծալում եյիր
սիրտս ել իր ծիծաղն եր փոռում դահլիճով մեկ:

* * *

Այնտեղ կար պոստախաղ: Քեզ զրեցի.

«Ա՛խ, քո ժպիտը...»

Յերբ նամակս բացիր ու կարդալով անցար մո-
տովս՝ ողը թարմացավ:

Իսկ յերբ թնդաց քո պարյեղանակը, դու մի քա-
նի պտույտ արիր ու կանգնած մի տեղում որորվեցիր:
Յերբ կիսախուփ աչերդ ուղղեցիր նաղանքով շարժվող
մատներիդ, ինձ տարար յեթերը...

Բայց յերբ դու պարդ դիտող հանդիսականների
շարքը կիսեցիր ու գնացիր, հազարմոմյա լապտեր-
ների լույսն աղոտացավ ինձ համար, յերդն ու նվազն
եւ իմադ չտվին սրտիս:

* * *

Յերբ հանդեսը ցրվեց, վերադարձին տեսա, վոր
ելի կուրծքդ զարդարում եր շուկայից չգնած իմ ծու-
դիկը:

Բարի աղջիկ, թե՞ն այսոր ձմեռ ե, բայց յերբ
դու դաս իմ ծաղկանոցը քո վոտները ձյունի փոխա-
րին ծաղիկներ կը տրորեն, հավետ կը հալչի սրարաբի-
դիս ձյունը, մայիսն իր գորգը կը փոխ այնտեղ:
Յեկ վոր այդպիս լինի:

oooooooo

Է.

Յըսից կարմրել եյին այտերդ, յերբ դուռը բացիր ու գործով մտար իմ աշխատանոցը:

Խենթ քայլերով մոտեցար դրասեղանիս և դրիբ դրկիդ ծաղիկների խուրձը:

Ինչպես միշտ, այնպես ել այժմ ծիծաղն եր խաղում քո դեմքին:

Յերբ համարձակվեցի քեզնից ծաղիկ խնդրել՝ դումերժեցիր:

— «Ծաղիկներս տեր ունեն,—ասիր:

Քեզ ել վոչինչ չասի: Զե վոր ծաղիկներդ տեր ունեյին:

Հավատա, չար աղջիկ, յեթե իմանայի, վոր դումի որ կըգաս իմ աշխատանոցը, իմ պարտիղի բոլոր ծաղիկները կը բերեյի ու կը փոեյի քո ճամբին...

Բայց՝

«Ծաղիկներս տեր ունեն»:

Զեմ մոռանում, իսկ դու իմացիր.

— Իմ ծաղիկները քեզ համար են միայն...

* * *

Յերբ գնացիր, սեղանիս վրա մնաց մի ծաղիկ:

Չգիտեմ մոռացար, թէ այդպես կամեցար, բայց գիտեմ, վոր քո թողած ծաղիկներն այսոր ել դարդարում են իմ գիրքը, բույրով ոծում նրա թերթերը:

Դու վոչինչ չդիտես, բայց յես գիտեմ, վոր իմ
ծառկանոցը փթթել ու գարուն և բուրում:

Ժլատ աղջիկ, յերբ դու գաս քո կարոտով հյուս-
ված իմ պարտեզը, բարի աչերդ կը տեսնես նրան,
սիրող կըզգա, վոր իմ պարտեզը դրախտ և դարձել...
Գութ արա, այս աղջիկ, մեր դոնով անցնելիս
վասդ դիր իմ պարտեզը...

— առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք

— առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք

առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք

• • • • •

առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք

առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք

առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք

3
8
5

առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք
առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք
առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք
առաջ անոնք առաջ առաջ անոնք առաջ անոնք

լ.

Յես ել Եյի տրամվայի սպասում, դու ել:

Զեռքիդ մանուշակները շուրջը բույր Եյին փռում
ու սիրահ Մայիսով ծածկում:

Յեթե դու այդքան սիրում ես ծաղիկ, հասկա ինչո՞ւ
մի որ իմ ծաղկանոցը չես գալիս:

Յեկավ ինձ տուն տանով վագոնը, բայց չը նըս-
տեցի:

Ինչպես կարող եյի քեզ մենակ թուխել ու գնալ:
Բայց յերբ քեզ տուն տանով վագոնն յեկավ...
Դու ցատկեցիր ու նստեցիր:

Իսկ յերբ վագոնը քեզ տարավ, արեի ճառագայթ-
ները պազեցիս, սիրու տիսրեց ու ինքս ինձ հարցրի.
— Ինչո՞ւ նրա վարմունքի մեջ չարություն կա...

18552

A III
382975



Յերբ իմացա, վոր իմ և քո սրտի մեջ բարեկամություն կա, աշխարհը ծիծաղով լցվեց:

Այդորվանից պարտեզս փթթեց ու բռյրն առնողի կյանքը դրախտի փոխեց, այդորվանից պարտիզիս շատրվաճար մարգարտե ցող եր ցանում ծառի ու ծաղկի վրա:

Քո ցանկությամբ իմ պարտիզի ավագանում կարապ ել լողաց: Դեղձանիկները սուլոցով ու դայլայլով իմ պարտեզը անմահությամբ ոծեցին, բայց դու դարձյալ չեկար:

Հավատա, լավ աղջիկ, հեքյաթը քեզնով և գեղեցիկ:

* * *

Մի որ դու ճերմակի փոխարեն սև հագար, դեմքդ թախծոտ դարձավ, ժպիտդ մարեց ու վիշտդ քեզ մեր քաղաքից հեռացրեց:

Իսկ այդորվանից տիրությունն ինձ ընկեր դարձավ նրա համար, վոր յերկինք աչերիդ արցունք յերեւաց ու ծիծաղը դադարեց պարել քո դեմքին:

Այդորվանից մեր քաղաքում տիրեց ամեն բան, անգամ արել ծագում ու մայր եր մտնում անծիծաղ, իսկ զիշերները սև եյին՝ սղի...

— Հավատա, այ աղջիկ, մեր քաղաքը քեզնով եր գեղեցիկ...

Այսոր, յերբ մտա իմ պարտեղը՝ տիրեցի:
Գունաթափ տերեները ծածկել եյին հողը, չորա-
ցել եյին վարդի թփերը, կանաչը խանձվել եր, ավա-
զանի ջուրը նեխվել — կարապի թողած վետուրները
յերեսին, ծառերի ճյուղերը սպանված թռչունի պես
թևաթափ եյին յեղել, գեղձանիկները չկային...

— Հավատա, հեռավոր աղջիկ, թե պարտեզ, թե
ծաղիկ քեզնովեն գեղեցիկ:

* * *

Այժմ պարտեզս ամայի, դուռս փակ թափառում
եմ քաղաքից քաղաք, լինում ամենուր ու չեմ գտնում
ինձ անհունը տանող հայացքդ յերբեք...

— Հավատա, լավ աղջիկ, թափառումներս քեզնով
են գեղեցիկ:

Յես գիտեմ, վոր աշխարհում ապրում ե մի աղ-
ջիկ, վոր իմ յերջանկությունը պահում ե իր մեջ,
իր աչերի, սրտի ու ժաղախ մեջ:

Իսկ դու չգիտես, վոր միենույն յերկնքի տակ
քեզ վորոնում ե մի տղա, վոր սերը սրտով շալակած,
մինչև որս ել թափառում ե քեզ գտնելու, քեզնով արև
տեսնելու համար:

— Հավատա, կարոտ աղջիկ, աշխարհ ու աստված
քեզնով են գեղեցիկ:

oooooooooooooo

Աղանձի Ծուրզը



Տոն եւ այսոր:

Յես ել եմ նստած սեղանի շուրջը բոլորած և սեղանի վրա յեղած ուտելիքները խժող մարդկանց մեջ:

Շուրջս առատ են խորհրդավոր հայացքներ:

Ժպիտների մեջ լողում եմ այսոր...

Տասնյակ հարյուրավոր են այն աչերը, վոր սլար ու ծիծագ ունեն իրենց մեջ:

Նրանք այսոր ել են վայելք անում ու ամեն որ վա պես դատարկում բաժակների զինին, վոր թիժացնում են նրանց սրտերն ու կայծեր տալիս աչերին:

Յես ել եմ բռնել վայելքի թասը, ձռնում քեզ ու դատարկում, վոր նորից լցնեմ, նորից դատարկեմ...

Յերբ քո և իմ հայացքները մեկեն ու շիտակ դիպան իրար, դու տիրությունն ինձ տիկիր, իսկ քեզ պարին:

Պարեցիր այնքան, վոր զլուխդ սլատեց...

Այդ լով եւ:
Պարիր, պտտիր, վոր թմբես, պարիր, պտտիր,
վոր արքես...

* * *

Զյունը թափվում է հանդարտ ու ճերմակում այն
քաղաքը, ուր մենք ենք, ուր տասնյակ, հարյուրավոր
աշեր խմբված մէ սենյակում, ելեքտրական առատ լույ-
սի տակ դասարկում ու գինով են լցնում բաժակները...

Այսոր քեֆ, վաղը քեֆ, միշտ քեֆ...

Ժպտասլար բռնած տասնյակ, հարյուրավոր աշե-
րի մեջ քո աշերն ել ժպիտ ունեն, քո աշերն ել են
առկայծում:

— Ստվեր ունեն աշերդ, — ասի:

Դու չհավատացիր, դնացիր հայելուն տվիր ա-
շերդ, վոր ստուգես:

— Ժպիտդ ու շրթունքներդ Զոկոնդային են նը-
ման, — ասի:

Դու չհավատացիր, հայելով ստուգեցիր:

— Պարդ ժիր ե. լավ, — ասի

Պարելով ստուգեցիր:

Միշտ պարի, պտտիր, վոր գլուխդ ոլտույտ գտ,
վոր անապատ նիրտդ զվարթ լինի, ուրախանա...

— Զյունոտ են բոլորի սրտերը, պղտոր մտքե-
րը, — ասի:

Դու մեղավոր հայացք տվիր ինձ ու գլուխդ խո-
նարհեցիր կրծքիդ:

— Նրանք կարոտ են լույսի ու արեի շողի. Նրանք
հորիղոններ տեսած չեն:

Աչերդ ուղղեցիր ինձ. դարձյալ մեղավոր հայացք
տվիր ու գլուխդ խոնարհեցիր կրծքիդ:

Ասի.

— Տասնյակ, հարյուրավոր աշերն անգամ դաշտի
ծաղիկ տեսած չեն, նրանք վերջալույսի բոսորը չեն
տեսած, նրանք սարերի շուրջպարի մեջ ընկած դաշ-
տում բռւքը չեն տեսած, իսկ դու տեսել ես:

Աչերդ բոցավառ դարձան, մարգարիտ ատամներդ
յերեացին, այտերդ հուր-հրատին տվին. ժպիտդ ել
դադար չունեցավ:

Ուրախությունից դու պարի յելար:

Դու պարի, պտտիր, վոր գլուխդ պտույտ դա...

Թող պտտվի գլուխդ, վոր ցավից լաց լինեա:

Դու լաց յեղիր, վոր յերք ուղենամ սիրովդ կա-
րոտ սրտիս դատարկը լցնել, խմեմ քո արցունքը...

Խմեմ արցունքներդ, վոր արքեմ...

Արքեմ, վոր մոռանամ քեզ ել, ինձ ել, աշխարհն
ել...

Արքեմ, վոր տիեղերքը պարի իմ աչքերում:

Ուզում եմ խմել արցունքներդ նրա համար, - վոր
լրիվ տեսնեմ պտույտն աշխարհի, կերպարանքն աստ-
ծո, ծագումն արեի, ակունքը ծովի, ալիքը փոթորկի...

Իսկ դու պարի, պտտիր, վոր թմրեա, պարի,
պտտիր, վոր արքես...

Արքիր ու սուլիր...

Դու լից դատարկը:

Դու պարի, անվերջ պտտիր:

Պարդ ժիր ե, դու մի դադարիր...

Այսոր քեֆ, վաղը քեֆ, միշտ քեֆ...

Այսոր դատարկ, վաղը դատարկ, միշտ դատարկ...

oooooooooooooo

կարող

Ուրախ եմ, անհուն ուրախ:

Մեր քաղաքն այսոր լողում է արևի շողերի մեջ,
քաղաքի շուրջը պար բռնած ճերմակ սարելը խնայում,
ձյուն չեն տալիս մեր քաղաքին:

Աւզում եմ տեսնել քեզ, խոսել քեզ հետ...

Կարուտս անհազուրդ է, անսպառ:

Տվի հեռախոսի զանգը, պատասխան չստացաք եղանակ:

Ինձ ավի գինուն:

$\theta_{L2} \approx 45^\circ$

Մուլթն իր թևերը փակէ ե մեր քաղաքի վրա, քո
տան վրա, ինձ վրա:

Քեզնով գերված սրտիս հետ անց ու դարձ եմ
անումք քո տան առաջ, քո պատուհանի տակ:

Ցուրտ է, սառնամանիք...

Ինչ հոգ։ Յես տաք եմ, հորդ և վառում ինձ։

* * *

Աղոստ լույսով կարմիրն եղ փռել ապակիներին:
Դուքնած ելիր...

Ա՞յս, ի՞նչու այսոր չորացել են բոլոր պարտեղ-
ները...

Չե՞ վոր յես ծաղիկներ պիտի բերեյի քեզ համար,
չե՞ վոր ծաղիկներս գրկած պիտի քնեյիր...
Չուր սպասում...

Աղոտ եյիր դարձրել լույսդ, կարմիրը տվել ա-
պակիներին ու քուն յեղել:

Ճուրտ ե, սառնամանիք.

Հոդ չե: Թող սառչեմ քո դռանը...

Անցնում են ժամեր...

Ճուրտ ե:

Սառնամանիք:

Դու այդ չգիտես. դու փակել ես աշերդ ու մուշ-
մուշ ննջում ես:

Քունդ անուշ, իմ անգին, իմ կարոտ...

Պու Զիսս

Ինձ հաղորդեցին, վոր դու այլես իմը չես, դու չկաս հիմա, դու գնացել ես հեռու, ոտար հորիզոններ վիշտ թաղելու համար, ինձ մոռանալու համար...

Թե ուր ես գնացել, չգիտեմ, թե ինչ ե պատահել քեզ, նույնալես չգիտեմ:

Ինձ ինչ...

Բայց յես գիտեմ ու հիշում եմ մեր յերեկը ու զգում շուշանաբույր շունչդ, թախծոտ աչերիդ կայծը, վոր սիրտս եր ծակում...

Քեզ մոտ, առանց քեզ խնջույք ել կար այսոր: Ինձ ինչ, թե դու չկաս...

Բարձրացրի գինով լի գավաթը և քո կենացը խմեցի այնալես, ինչով սրանից ուղիղ մեկ տարի առաջ...

Ինչ քաղցր են հիշողությունները...

Հիշում եմ, յերբ դու հանգիպում եյիր ինձ ու մեկնում ձեռդ, յես հուպ եյի տալիս նվազարան մատներդ այնալես, վոր ցավից աչերդ արցունքով եյին լցվում ու թաթիկդ փախցնում իմ բոխց...

Սիրում եյի քեզ հետ կատակել նրա համար, վոր

դու չարաձնի եյիր, վոր դու ել կատակ եյիր...
ինչ քաղցր են հիշողությունները...

* * *

Մի անգամ, յերբ նստած եյի շուշանով ոճած քո
սենյակում, դու պատուհանիդ մոտ կանչեցիր ինձ,
ցույց տվիր զույգ աղավնիւեր դիմացի կտուրին խա-
ղալիս...

Դու անպիտան ես նրա համար, վոր չգիտես թե
դու ել աղավնի յես, վոր դու ել խազի ալջիկ ես...

Դու անպիտան ես. այդպես ել մնա, բայց յես
— Այսոր ել դինով լի բաժակը դատարկեցի քո կե-
նացը այնպես, ինչպես սրանից ուղիղ մեկ տարի առաջ...
ինչ քաղցր են հիշողությունները...

* * *

Այժմ քեզ կարոտում եմ նրա համար, վոր թա-
թիկդ առնեմ ձեռքերիս մեջ, սեղմեմ ու ցավ պատճա-
ռեմ քեզ, իսկ դու փախցնես ձեռդ ու ասես.

— Անպիտան...

Ինչ լավ եր հնչում քո խոսքը.

— Անպիտան...

Ինչ քաղցր են հիշողությունները...

Thūpīs llip



Արես պայծառ դարձնող աղջիկ, զլուխտ խոնարհիր, բաց սիրտդ ու լսիր իմ չասված խոսքերը...

Թող խաղդ, սուտ ժլատ մի լինիր ու հոգուդ աչքերով տես ինձ այնպես, ինչպես կամ:

Ինձ խաղիդ գիրկը մի նետիր, վոտներս մի ուժատիր սրտիս ըեռից...

Վիշտը հեռու պահիր ինձնից ու մասն արա այն ուրախության, վոր քո մեջն ես պահում հավերժ ու անսպառ...

Թե դու սիրտ ունես, յես ել ունեմ, նրան մի շպրտիր փողոց. մի ձգտիր վորք պահել նրան, այլ.

— Գլուխտ խոնարհիր, բաց սիրտդ ու լսիր իմ չասված խոսքերը...

Մեր հանդիպումները մի դարձնիր առորյա. արեք խավարեցնող քո աչքերը մի հանիր շուկա—ափսոս են, նրանց լույսը կըխավարի ու աշխարհը գերեզմանոց կըդառնա...

Քո ձեռները պահիր, վոր չտեսնեն—ափսոս են, նրանք ել չեն կարող նվազել:

Քո մատների մասին վոչոքի չեմ ասիլ, չեմ նկարի
այստեղ, վախենում եմ, վախենում եմ, վոր ել չկարո-
ղանաս նվազել իմ սրտի վրա:

Միթե չգիտես, վոր քո մատներով նվազելու
գործիք չունի աշխարհը, այլ կա սիրտս միայն—նվազիր
նրա լարերին ու ձայնին ունկնդիր յերազ դարձիր...

Սիրտս քեզ համար նվազարան, իսկ մատներդ
դարմանալի յերաժիշտ, յերբ ել ուղենաս, յեկ ու դարկ
նրա լարերին, վոր մենք արբենք աշխարհի հրաշքով,
իմ ու քո հրաշքով...

Գանձերդ մի թափիր ամենուր. իմ պարտեզը քո
ցանքսի համար ե, ինչ ունես, ցանիր—այնտեղ կը-
բուսնի քո ուղած ծաղիկը, իսկ յես կըխնամեմ նրանց
իմ մատներով, իմ աչքերով, իմ սրտով, և յերբ վրա
հասնի յերաշտը ու սիրտս լցվի քո կարուտով, իմ ար-
ցունքներով կըջրեմ քո ցանած ծաղիկները...

Այդպես արա.

— Գլուխգ խոնարհիր, բաց սիրտդ ու լսիր իմ
չասված խոսքերը...

— Թող խաղղ, սուտ ժլատ մի՛ լինի ու հոգուդ
աչքերով տես ինձ այնպես՝ ինչու կամ...

հանդիպութ

Վերջապես, նորից քեզ տեսա...
Դու այսոր ել աշխարհը վայելք դարձրիր...
Յերբ քեզ հանդիպեցի, զարմանում եմ, թե ի՞նչու
սիրաս չպայթեց...

Ճամբես շեղող աղջիկ, տչերդ ելի անհունը տո-
րան ինձ, տեսքդ ու շունչդ ելի կյանք պարզեցին,
հայացքդ ու ժպիտդ հեքյաթո հրաշք դարձրին...
Ինչ ուրախ եմ այսոր...

* * *


Վերջապես նորից քեզ տեսա...
Ելի գարունը յեռաց աշնան ճամբեն բոնած որր-
տիս...

Այսոր նորից արժանացա հաղարորյա կարոտիս
իմ աստծուն իրական...

Յերբ քեզ հանդիպեցի, սիրաս դողաց, արեք պայ-
ծառացավ, զիշերը ցերեկ դարձավ, յերաժշությունը
թնդաց աշխարհով մեկ, ծաղիկները բույր ու տեսք
ստացան...

Այսոր թոչունները հավերժության համերդը կազ-
մեցին ինձ ու քեզ համար...

Վերջապես, նորից քեզ տեսա...
Ինչ ուրախ եմ յես,—
Ինչ ուրախ ե աշխարհն այսոր...



Կարսէ

համբույր

Ինչ լավ են ձմբան գիշերները...

Յերբ լուսավորում եմ սենյակս ու տաքացնում,
մոռանում եմ աշխարհի չարն ու բարին:

Սիրում եմ յերկար նստել վառարանիս մոտ. խա-
ղալ կրակի հետ, մինչև վոր այս մրզի, մոխիր դառնա:

Յերջանիկ ե և այն պահը, յերբ դու թեթև,
զրցուն քայլերով մոտենում ես մենարանիս դռանը և
կամաց բախում:

Յերբ բացում եմ դուռո՞վ վարդագույն, բարակ
շրթերդ անձայն ծիծաղում են. մարդարիտ ատամներդ
հրաշք են դարձնում թուխ, թավշե տեսքդ...

* * *

Նստում ենք իրար քով, կրակի դիմաց ու հոգե-
շահ դրույցին ենք տալիս մեղ. խոսում ենք քո մասին,
իմ մասին և աշխարհի անց ու դարձի մասին...

Յերկար, շատ յերկար ե տեսում մեր դրույցն ան-
սպառ. ապա հպվում են մեր շուրթերը...

Դու բուրում ես հովատշուշանի բույրով:

Արբած աչերդ հառած ուղիղ տչքերիս, շնչում ես.

— Նուշ, իմ նուշ...

* * *

Ի՞նչ լավ են ձմբան գիշերները...

Յերբ հրաբորոք հպվում են մեր շրթները, մոռանում ենք ամեն բան ու ամենին, անգամ մեղ...

Յերբ հուր են դառնում մեր սրտերը՝ լոռում ենք,

Մեր խոսքը շշուկն է:

Այսպես են սահում հավերժության փարած մեր ժամերը...

Մեր հեքյաթը նրա համար ե լավ, վոր զարունակ յեռում մեր սրտերում, մեր աչքերում...

Այսպես ենք հյուսում մեր հեքյաթը...

* * *

Յերբ խաղաղությունն ե տիրում աղմկող քաղաքին, դու բաժանվում ես ինձնից ու ելի մենակ թողնում...

Յերբ դու գնում ես, սենյակս ցըտում ե...

Յես ել մարում եմ լույսը և մահճիս ընկած յերկար, շատ յերկար ժամանակ զգում շունչդ, տեսնում նշանե, արբած աչերդ...

Ի՞նչ լավ են ձմբան գիշերները...

••••••••••••••

Ժաղիկ Ժախոնը

Զմեռն անցել եր:

Քաղաքի գլխավոր մայթերում այնքան բազմություն կար, վոր անց ու դարձը դժվարացել, դանդաղել եր:

Գարնային արեստ կեսոր եր:

Արեի ջերմ որին կարոտ մարդիկ ծաղկով զաք-
դարվել ու կազմել եյին ռըսանքի հանդեսը:

Առատ ժպիտն եր փովել նրանց դեմքերին:

Կային և մարդիկ, վոր մայթերի մոտ կանդնած
ծաղիկ եյին ծախում—իսկ գեր ու պճնվածներին գըլ-
խարկ վերցնում և առաջարկում.

— Մանուշակներ, թարմ մանուշակներ...

Փողոցի միջով գալիս եր յերկանիվ մի կառք,
վորին կողք-կողքի նստած եյին տերն ու կառապանը:
Թիկնեղ ու հաղթանդամ ձին գլուխն որորելով,
բաշի ու վզի խիտ, յերկար վարսերը ցնցելով, ճերմակ
փըրփուրը բերանին միաչափ դոփյունով տանում եր
նրանց:

Արեի շողերի տակ մետաքսի պես փայլում եր նրա
ոն, միաղույն մարմինը:

Կառքին մոտեցավ ծաղիկ ծախողներից մեկը,
խոնարհ գլուխ տվեց տիրոջը, կողովից հանեց ծաղիկ-
ները և հուսալի ժպտով առաջարկեց:

Տերը աչքերը հառեց նրա վրա, զայրացավ:

Ծաղիկ ծախողը չփառվեց, կրկնեց առաջարկը:

Տերը խիստ զայրացավ, սիդարն հանեց բերանից
ու գոռաց.

— Կորիր, անսպիտան...

Ծաղիկ ծախողը կարմրեց, յիտ քաշվեց ու ակա-
մայից ժպտաց...

Կառքն անցավ:

Ծաղիկ ծախողը դիրքն անփոփոխ, ակնառիշ հե-
տ'ում եր նրա ընթացքին:

Յերբ կառքն անհետացավ, ծաղիկ ծախողը գը-
լուխն որորելով կրկնեց.

— Կորիր, անսպիտան...

•••••••••••••••

Գունսիր Մեղմիկը



Գարնային արևը ջերմություն եր տալիս, նոր
կյանք եր պարգևում մարդկանց:

Այդորշ կատարյալ տոնական եր:

Այդորշ ծաղկեվաճառի՝ ֆլիրտի որ եր:

Ամենուրեք անցորդներին մոտենում եր մի զույգ
և առաջարկում.

— Սպիտակ ծալիկներ, բարի յեղեք...

Ասում եր աղջիկն ու մերկ պարանոցից սպիտակ
ժապավենով կախված կողովից հանում արհեստական
շուշան-ծաղիկներ ու ժապակեմ զարդարում անցորդի
կուրծքը:

Աղջկա ընկեր տղան, մարզանք անող զինվորի
պես, արագ շարժումով վոտքերը իրար մոտեցնում և
առաջարկում եր տուփը: Դրամն ստանալով նրանք գը-
նում եյին նորանոր նվաճումներ անելու:

— Թոքախտի դեմ, թոքախտավորների համար...

Մեծ հրապարակի մայթերում բաղմությունն այնքան եր խռնվել, վոր անց ու դարձը դադարել եր:

Հազարավորների հայացքն եր կլանել գունատ աղջիկը ու հազարավորներին զվարճություն եր պատճառում...

Նա ուրիշների պես տղամարդ ընկեր չուներ: Վորսորդի պես ուսերից խաչածե կախել եր գանձատուփն ու ծաղկի կողովը:

Գունատ աղջիկը հավուր պատշաճի ճերմակ չեր հազել. վոչ ել կուրծքն ու գլխարկը ծաղկով զարդարել:

Մուզ կապույտ եր հաղուստը, կարմիր՝ գլխարկը:

Ընթացող ավտոմոբիլի առջևից յետ-յետ եր վազում նա՝ կանգնեցնելու համար, իսկ նրա մեջ նստած մարդկանց հաստ պարանոցները կարմրում եյին ծիծաղից:

Յերբ դանդաղում եր ավտոմոբիլի ընթացքը, մի ակնթարթ նա թռչում եր վրան ու շնչակտուր ծաղիկ տալիս նրանց:

Նրան չեն մերժում:

Նրան դրամ չեն խնայում.

— Թոքախտի դեմ, թոքախտավորների համար...

Դրամի զրնգոցն ուրախացնում եր գունատ աղջկան: Նրա մարած հայացքը փայլ եր ստանում:

Նրան պատկերանում եր յեղբայրն անկողնում:

Յեղբոր ընդհատ-ընդհատ հազն ու նվազ ձտյնը քրոջ ականջումն եր տսես: Քանի պատկերանում եր յերիտասարդ յեղբայրը, այնքան կրկնապատկում եր

ծաղիկ ծախող աղջկա յեռանդը. վորքան շատ եր դրամ
թափում տուփի մեջ, այնքան յեղբորը փրկված, ա-
ռողջացած եր զգում...

Քիչ հեռու ուրիշներն աշխատում եյին ավելի
ճարպիկ լինել, ուշագրություն գրավելու համար—նը-
րանք անվախ թուզում են ընթացող տրամվայն ու ավ-
տոմորիլը, սակայն զուր, մրցությունը նպատակին չի
հասնում:

Գունատ աղջիկը վոչոքի չեր տեսնում, նա միշտ
յեղբոր հետ եր, յեղբայրն իր հետ...

Նա հոգնել եր: Շուտ-շուտ կանգնում, հանգստա-
նում եր ու յերեսին թափվող մազերը հարդարում—
թրջված թաշկինակով սրբում քրտինքն ու ձեռքով
հովհարում: Նա ուժասպառ մի կողմի յեր թեքվում մի
փոքր ժամանակ ու նորից սկսում * աշխատանքը...

Ելի՛ պատկերանում եր յեղբայրը:

Յեփ այս բոլորը՝

— Թոքախտի դեմ, թոքախտավորների համար...

Մթնեց:

Գունատ աղջիկը գնաց պավիլիոն, լի տուփն ու
դատարկ կողովը հանձնեց հանգեսի կառավարչուհուն,
շնորհակալություն ստանալով գեր տիկնոջից, գնաց
մոտակա կայարանն ու նստեց առաջին պատահած վա-
գոնը:

Հրավառություն եր քաղաքում, գույն-գույն լալ-
տերներն եյին զարդարել չորսդին, նվազի ձայներ եյին
լսվում ամեն կողմից, իրարանցումն ու խնդությունն

Ել ավելի յեր շատացել, բայց գունստ աղջկեր վոչինչ
չեր տեսնում, վոչինչ չեր զգում:

Մտքով իրենց տանն եր, յեզրոր սենյակը, իրեն
յերեակայում նրա սնարի մոտ՝ նրա պահանջները կա-
տարելիս:

Տրամվայի զանգն ու կոնդուկտորի սուլիչը ցը-
լում ելին նրա մտապատկերները:

Նորից իրեն զգալով վագոնում ջղայնաբար հոտ-
հոտում եր վարդերի փունջը, վոր տանում եր յեղ-
բորը...

Հասավ տուն:

Էա հայ-կամաց բարձրացավ աստիճաններով, ա-
սես հոգնածությունն անցավ... Արագ, հաղթական քայ-
լերով դիմեց յեղբոր սենյակը, աշխույժ շարժումներով
բացեց դռուը և զարմացած նայեց չորս կողմը:

ՍԵԿՅԱՆ ԽՈՐԻՆ ԼՈՒԺՅԱՆ մեջ եր...

ՅԵՐԵՎԱՆ անկողինը չկար:

Եփոթ դրության մեջ բացեց յերկրորդ սենյակի
դռնը:

Louie's *magical*...
...

Գունատ աղջիկը մի ակնթարթ քարացավ ու հետո վազեց, ամուր, շատ ամուր փարվեց մոր վզով...

Մյուսների բարձրաձայն լացի հետ լովում եր
նրա հեկեկոցը:

Իսկ դուրսը դեռ շարունակվում էր խնդությունը
ու տոնակատարությունը.

—Թոքախտի դեմ, թոքախտավորների համար...



իւ Տուղիկը



Գնացքն ինձ բերեց սարերի շուրջպարի մեջ ընկած ոտար, բայց հարազատ քաղաք:

Ճուտիկս, յերբ համբուրվեցինք ու հեռացա, դումեր փողոցադրանը կանգնած քո թաթիկներով ինձ յետեյիր կանչում...

Ոտար յերկիր գալուս որերն ամիսներ դարձան. իսկ քո կարոտը սիրտս և խտղտում:

Ճուտիկ, այժմ դու ինձ նամակ ել ես գրում:

Քո խոսքերո քո թաթիկն ե, վոր նկարում և տանից ինձ ուղարկած նամակի մեջ ես դնում:

Գիտես ճուտիկս, քո թաթիկն յես համբուրում եմ համբուրում, վոր կարոտս առնեմ:

Մատաղ քո թաթիկին ել, քո վոտիկին ել...

Իմ ճուտիկ, մեն-մենակ նստած, վառարանիս ճըթճըթոցին ունկնդիր՝ գրում եմ այս տողերը քեզ համար, գրում եմ ինձ համար, վոր կարոտս պատկերեմ, վոր կարոտովդ լաց չլինեմ...

Իմ մենության ժամերին միշտ քեզ հետ եմ լինում նրա համար, վոր իմ աշխարհն ունես քո մեջ...

Մատաղ քո սիրուն լեղվին, քո ժիր հոգուն, քո արեին,—իմ փոքրիկ արե...





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038275

(254)

A ii
38275



Գաբրիանկալները յեկ շապիկը Հակոբ Առջանի
Գիրքը տպագրված է Լուսովկոմատի տպարանում
Թույլատրված և դ. Ք. Լ. դ. 10 հունվարի 1923.